ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց Սարգիս Աղայանը

Ս.թ. հունիսի 30-ին ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության նիստում ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի տնօրենի պաշտոնում ընտրվեց կենսաբանական գիտությունների թեկնածու Սարգիս Աղասու Աղայանը:

Սարգիս Աղայանը ծնվել է 1986 թ.-ին Գյումրի քաղաքում: 2003-2007 թթ.-ին սովորել է Երևանի պետական համալսարանի կենսաբանության ֆակուլտետի կենսաֆիզիկայի բաժնում և ստացել բակալավրի որակավորում, 2007-2009 թթ.-ին շարունակել է կրթությունը նույն բաժնում՝ ստանալով մագիստրոսի որակավորում: 2009-2012 թթ.-ին եղել է ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի ասպիրանտ, 2012 թ.-ին ստացել է կենսաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան:

2004-2006 թթ.-ին եղել է Երևանի պետական համալսարանի «Ինտելեկտուալ ակումբ»-ի հիմնադիր և նախագահ, 2016-2017 թթ.-ին՝ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» ղեկավար մարմնի անդամ, 2013-2017 թթ.-ին՝ «Էկոտուր» ՍՊԸ-ի համահիմնադիր և տնօրեն, 2009-2017 թթ.-ին՝ «Կենսաբանների հայկական միություն» ՀԿ-ի փոխնախագահ, 2017-ից նույն ՀԿ-ի նախագահն է, 2019 թ.-ից՝ «ԷյԱր Թրեյլս» ՍՊԸ-ի համահիմնադիր, 2020-2022 թթ.-ին՝ «ԷյԱյՓի Թեք» ՍՊԸ-ի համահիմնադիր և տնօրեն, 2022 թ.-ից՝ ընկերության ֆինանսական համակարգող: 2022 թ.-ից՝ «ԷյԱր Թրիփ» ՓԲԸ-ի հիմնադիր և տնօրեն:

2016 թ.-ին ՀՀ սպորտի և երիտասարդության հարցերի նախարարության կողմից ճանաչվել է տարվա լավագույն երիտասարդ բնապահպան, 2017 թ.-ին ՀՀ նախագահի կողմից արժանացել է շնորհակալագրի՝ «Երիտասարդ գիտնականների աջակցության ծրագրի» զարգացման համար, 2020 թ.-ին ստացել է ՀՀ նախագահի մրցանակ (ներկայում՝ Պողոսյան մրցանակ) բնական գիտությունների զարգացման ոլորտում: Սարգիս Աղայանը մասնակցել է

հանրապետական և միջազգային բազմաթիվ գիտահետազոտական և հանրային ծրագրերի իրականացմանը: Նա տիրապետում է հայերենին, անգլերենին, ռուսերենին, պորտուգալերենին:

Ներկայացնելով ՀՀ ԳԱԱ կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի զարգացման իր տեսլականը՝ Սարգիս Աղայանն ասաց, որ անհրաժեշտ է մշակել ռազմավարություն, որի հիմնասյուներն են մասնակցային կառավարումը, արդյունավետ աշխատանքը և առողջ մրցակցությունը, համագործակցությունն ու մարդկային ռեսուրսները:

«Մեր երկարաժամկետ՝ 10-15 տարվա նպատակն այն է, որ կենտրոնն իր ցուցանիշներով դառնա Հայաստանի արդյունավետ 5 գիտական կենտրոններից մեկը, բազային ֆինանսավորումը կազմի կենտրոնի ընդհանուր ֆինանսական շրջանառության 20%-ը, ծավալվի առնվազն երկու ինքնաբավ գիտական ձեռնարկատիրական գործունեություն, իրականացվի կրթական գործունեություն: Վստահեցնում եմ, որ այս ամենին հասնելու համար կաշխատեմ իրականացնել բոլոր քայլերը պատվով և պատասխանատվությամբ», - ասաց Սարգիս Աղայանը:

ՀՀ ԳԱԱ գիտության հանրայնացման և հասարակայնության հետ կապերի բաժին